



COVID - 19

200 ԼԱՐԻ ԽՐԱՍՆԻՉ ՎՃԱՐԸ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՆԱ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ ՎԵՐՉ

Վրաստանի կառավարության որոշմամբ, կորոնավիրուսի դեմ պատվաստված ղեկավարները տրվող 200 լարի պարգևավճարը կգործի մինչև հունվարի վերջ:

Հիշեցնենք, որ կորոնավիրուսի դեմ պատվաստվող պատվաստումները խրատախառնում են 200-ական լարի խրատախառնումները 200-ական լարի խրատախառնումները 200-ական լարի խրատախառնումները...

պատվաստված է չափափակ բնակչության 41, 2%-ը: Խթանիչ դեղաչափով պատվաստվել է մոտ 100 հազար քաղաքացի: Պատվաստվել կարող են 12-ից 15 տարեկան երեխաները, 18 տարեկանից բարձր անձինք, այդ թվում հղիության ցանկացած փուլում գտնվող կանայք եւ կերակրող մայրերը: Նշենք նաեւ, որ Վրաստանում կարող է պատվաստվել ցանկացած երկ-

րի քաղաքացի, եթե օրինական ճանապարհով մուտք է գործել Վրաստան եւ գտնվել է երկրում առնվազն երեք ամիս: Վրաստանում կացության թույլտվություն չունեցող օտարերկրյա քաղաքացիների համար պատվաստվումը հասանելի է դեռևս 3 հաստատություններում՝ Թբիլիսիի Նիկոլոզ Ղիվիշիձեի կենտրոնական համալսարանական կլինիկայում, Բաթումիի համալսարանական հիվանդանոցում եւ Քութայսիում: Զխորածեղի հաշմանդամների եւ տարեցների բժշկական կենտրոնում:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱՉԱՆՅՈՒՄ 321 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվը աշխարհում հասել է 321 107 897-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 5 540 833-ը: Ապաքինվել է 264 296 790 մարդ:



Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում ԱՄՆ-ն է, որտեղ կա հաստատված 65 236 475 դեպք: Այստեղ մահացածների թիվը 869 212 է, երկրորդ տեղում Չինաստանն է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 36 582 129-ի, մահացածների՝ 485 350-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում Բրազիլիան է: Այստեղ վարակվել է 22 815 827, մահացել՝ 620 609 մարդ: Մեծ Բրիտանիայում կորոնավիրուսով վարակվել է 14 967 817, վարակի հետեւանքով մահացել՝ 151 342 մարդ: Մեծ Բրիտանիայից հաջորդում են Ֆրանսիան, Ռուսաստանը, Թուրքիան, Իտալիան, Իսպանիան ու Գերմանիան:

Չայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է 347 084-ի, մահացածների՝ 8 015-ի, ապաքինվածներին՝ 333 412-ի: Ադրբեջանում վարակվածների թիվը 623 555 է: Վարակից մահացել է 8 490, ապաքինվել՝ 607 397 մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է 984 802, մահացել՝ 14 395, ապաքինվել՝ 924 072 մարդ:

Հունվարի 14-ին կորոնավիրուսով վարակված 5 567 մարդ դեպքերից 3 479-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 587, Իմերեթիում՝ 434, Քվեմո Քարթլիում՝ 159, Շիդա Քարթլիում՝ 254, Գուրիայում՝ 130, Սամեգրել-Չքեթիում՝ 199, Կախեթիում՝ 130, Սցխեթա-Մթիանեթիում՝ 84, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 26, Սամցխե-Ջավախեթիում՝ 85:

Հունվարի 14-ի տվյալներով մահացել է 36 մարդ:

ՈՐՈՂՔ ԵՆ «ՕՄԻԿՐՈՆԻՆ» ԲՆՈՐՈՇ ՀԻՆԳ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԸ

Վարակարան ՍԱԻԱ ԲՈՒԾԱՇՎԻԼԻՆ, խոսելով «Օմիկրոնի» մասին, առանձնացրել է հինգ հիմնական հատկանիշ, որոնք բնորոշ են այդ շտամով վարակված հիվանդներին:

Խոսքը քթահոսքի, գլխացավի, ընդհանուր թուլության, փոշոտոցի եւ կոկորդացավի մասին է: - «Օմիկրոնով» պայմանավորված կովիդի ինկուբացիոն շրջանը տեւում է երեք օր: Հնարավոր է հազն առավել արտահայտիչ լինի, քան մյուս շտամների դեպքում: Ջերմությունը պա-

կաս բնորոշ է, մյուս շտամների համեմատ: Ստորին շնչուղիների վնասը տեղի է ունենում համեմատաբար ավելի քիչ, եւ, հետեւաբար, շնչահեղձությունը պակաս բնորոշ է: Մինչ այս պահը առավել պակաս են արտահայտվել սրտխառնոցը, քրտնարտադրությունը, մեջքի ցավը, - նշել է վարակաբանը:

Սաիա Բուծաշվիլին նշել է նաեւ, որ 70 տոկոսով նվազել է հոսպիտալացման վիճակագրությունը, 50 տոկոսով՝ վերակենդանացման բաժանմունք տեղափոխվող կամ արհեստական շնչառության կարիք ունեցող բուժառուների թիվը: Ըստ վարակաբանի, վերակենդանացման եւ արհեստական շնչառության կարիք ունեցող հիվանդների մեծ մասը պատվաստված է, քանի որ

պատվաստանյութի հատկապես երեք դեղաչափերը 80 տոկոսով նվազեցնում են վարակման հավանականությունը եւ կամ վարակման դեպքում ապահովում հիվանդության թեթեւ ընթացքը: Մասնագետները, այնուամենայնիվ, զգուշացնում են, որ «Օմիկրոնի» տարածումը նոր է սկսվել եւ հետազոտությունները բավարար չեն լիարժեք պատկերացում կազմելու համար:

ԿՐՃԱՏՎՈՒՄ ԵՆ ՄԵԿՈՒՍԱՅՄԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վրաստանում որոշակի կատեգորիաների համար մեկուսացման եւ կարանտինի ժամկետները կրճատվում են:

Այդ մասին ճեպագրույցում հայտարարել է Վրաստանի առողջապահության փոխնախարար ԹԱՍՄԱՐ ԳԱԲՈՒՆԻԱՆ: Ասիմպտոմատիկ, թեթեւ դեպքերի ժամանակ մեկուսացման եւ կարանտինի ժամկետը կլինի ութ օր: Այնուամենայնիվ, ախտահիշների սկզբից պետք է անցած լինի առնվազն

24 ժամ, եւ մեկուսացումից հետո հաջորդ հինգ օրվա ընթացքում խստորեն խորհուրդ է տրվում դիմակ կրել: Միջին եւ ծանր դեպքերի համար վերջնաժամկետը առնվազն 10 օր է, եւ վերջին 24 ժամվա ընթացքում պետք է լինի ախտահիշների կտրուկ բարելավման դիմամիկա: Այստեղ նույնպես

խստորեն խորհուրդ է տրվում դիմակ կրել մեկուսացման ավարտից հետո հաջորդ հինգ օրվա ընթացքում:

Ինչ վերաբերում է չպատվաստված անձանց, ապա առաջարկվում է, որ նրանք շփումից հետո ութ օր մնան կարանտինում եւ 9-12 օր օգտագործեն շնչադիմակ:

Առողջապահության փոխնախարարի խոսքով՝ փոփոխություններն ուժի մեջ կմտնեն երկուշաբթի:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԸ

ԹԱՏՐՈՆ

ԱՂԱՄՅԱՆԱԿԱՆՈՒՄ ՏԱՐԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ Ե ԼԻՆԵՆՈՒ

2022 թվականը նշանավորվելու է հատկապես վիրահայ եւ ոչ միայն, թատերասերի կյանքում: Թբիլիսիի Պ.Աղամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆՂՈՒԹՅԱՆԸ «Վրաստանի» հետ գրույցում լիահույս է, որ աշնանը թատրոնն իր 166-րդ թատերաշրջանը շարունակելու է հարազատ նորակառույց շենքում:

Բացի նրանից, որ այդ մասին վկայում է գրեթե ավարտուն շենքը, տարին նույնպես իր ավետիան է բերել: Հունվարի 6-ին, Սուրբ Ծննդյան օրը, աղամյանցիներն ու նրանց երեխաները իբրեւ հանդիսատես «Բարով եկար, Նոր տարի» ներկայացումը վայելելու, հնարավորություն են ունեցել հենց հարազատ շենքում՝ ջերմանալով նույն Հավաքարի, նույն տեղում, նույն տաք, բայց այս անգամ հիմնովին նոր պատերում:

Անցած ու իր երթը սկսած տարիների ձեռքբերում-ծրագրերից խոսել ենք Արմեն Բայանդուրյանի հետ:

- Սիրելիներս, շնորհավոր Ամանոր, Սուրբ Ծնունդ: Շատ կուզեի, որ վերջապես մենք մեր հանդիսատեսին դիմավորեինք իբրեւ տանուտերեր: Կուզեի, որ մեր հանդիսատեսը, «Վրաստանի» ընթերցողը, մեր եկեղեցու հավատացյալը... ու երեւի թե նախեւառաջ հայկական դպրոցում աշակերտությունը լիառատ լիներ: Կուզեի տարին դռների բացումը բերեր, որակի փոփոխությունն ու մեր արժեքների վերանայում:

Ցավոք, անցած տարին ծանր ընթացք ունեցավ: Համավարակը շատերի ընտանիք մտավ՝ անդամալի կորուստներով: Փառք Տիրոջը, թատրոնում բոլորս ողջ-

առողջ ենք: Ու դեռ ավելին, ունեցանք երեք առաջնախաղ՝ Ք.Բախտուաշվիլու եւ Ա.Տազարեի «Հին վրացական վոդեվիլները» (վերաբեմադրումը՝ Ա.Բայանդուրյան, Լ.Ուզունյան), «Ծառերը կանգնած են մահանում» (բնդ.՝ Գագիկ Մելքունյան) եւ «Բարով եկար, Նոր տարի»: Ունեցանք հյուրախաղեր, որոնցից ամենանշանակալիցը Բաթումին էր՝ 20 տարվա բացակայությունից հետո: Մենք խաղացինք «Մեղադրական եզրակացությունը»՝ վրացերեն եւ «Հին վոդեվիլները»: Հյուրախաղերով հանդես եկանք Սամցխե-Ջավախեթիում եւ, ի դեպ, ուրախությամբ նշեմ, որ այսուհետ այդ այցելությունները լինելու են պարտադիր եւ ոչ հյուրախաղային: Հենց տարեսկզբին սահմանելու ենք կոնկրետ ամսաթիվ եւ, ապա մեկնելու Վրաստանի հայաբնակ տարածաշրջաններ:

Ինչ վերաբերում է 2022 թվականին, ապա այն թատրոնի կենսագրության մեջ պատմական է լինելու: Ինչպես գիտեք, Բիծինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի ֆինանսավորմամբ մեր հարազատ թատրոնի երկարասպաս շենքի դռներն ենք բացելու: Բացմանը հաջորդող օրը, ներկայացնելու ենք Գաբրիել Սունդուկյանի «Պե-



րոնում հենց «Պեպոն» էր: Հույս ունեմ, որ այս նոր տարին նորից է երիտասարդացնելու մեր թատրոնը: Մենք ունենք երեւանի պետական թատերական համալսարանի ռեժիսորայի բաժնի ավարտող չորս աղամյանցիներ՝ Լյուբա Սահակյանը, Գլորիա Գեւորգյանը, Գեւորգ Թերթանյանը եւ Արթուր Գասպարյանը: Ռեժիսորի կարգավիճակում նրանք հանդիսատեսի դատին են հանձնելու իրենց դիպլոմային ներկայացումները՝ նոր մոտեցում ու ճաշակ բերելով: Ունենք նաեւ նույն համալսարանի եր-

յակ տարիներ առաջ բեմադրվեց վիրահայոց թատ-



րորդ, երկրորդ կուրսում ուսանող աղամյանցիներ, որոնք եւս իրենց խոսքը պետք է ասեն: Այնպես որ, կյանքը թատրոնում եռում է, շարունակվում... ու այդպես էլ սկսել ենք տարին: Թրծվել հենց մեր թատրոնի պատերի ներսում ու այդ ոգով, «Բարով եկար, Նոր տարի» ներկայացումով, Ձմեռ պապով ու Չյունանուշով մեկնել Բոլմիս-Խաչեն, Խոժոռնի, Գյուլիբաղ, Դամիա, Միրզոելա գյուղեր, ուրախացրել մեր երեխաներին:

Արդեն, հունվարի 23-ից աղամյանցիներս սկսում ենք մեր աշխատանքային առօրյան: Պատրաստվում ենք 19-րդ դարի ռուս դասական Նիկոլայ Գոգոլի «Ռեվիզորի» առաջնախաղին՝ իմ բեմադրությամբ: Մյուս ամսականների մասին դեռ կխոսենք, արվածի մասին խոսելիք դեռ շատ կունենանք...

Եվս մեկ անգամ շնորհավորում ենք բոլորիս տարեմուտի առիթով, թող այն նոր ծնունդների ու ամուր ընտանիքների ծեւավորման տարի լինի...

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՊԿ-ՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՎՆԱԺԱՄԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Է»

ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նիստ, որի օրակարգում ընդգրկված է եղել «Ղազախստանի Հանրապետությունում իրավիճակի եւ դրա կարգավորմանն ուղղված միջոցառումների մասին» հարցը:



Տեսակոնֆերանսի միջոցով անցկացված նիստին մասնակցել են նաեւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեւը, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, Ղրղզստանի նախարարների կաբինետի նախագահ, Ղրղզստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ալիլբեկ ժապարովը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը գոհունակությամբ փաստել է Ղազախստանում տիրող իրավիճակի վերաբերյալ անդամ երկրների միջեւ բարձր փոխըմբռնումը, մասնավորապես նշելով, որ ռազմավարական կարեւոր օբյեկտների պաշտպանության համար սահմանափակ ժամկետով խաղաղապահների ուղարկումը իրավիճակի հնարավորինս շուտ կայունացման եւ երկրի բնականոն կյանքին վերադարձնելու միտում ունի, ինչպես նաեւ ահաբեկչության դեմ պայքարի եւ ճգնաժամային արձագանքման մեխանիզմների ամրապնդման:

Նշելով, որ ՀԱՊԿ-ի շրջանակում բարեկամ Ղազախստանին օգնելու ուղղված ջանքերը կօգնեն հնարավորինս սեղմ ժամկետներում վերականգնել երկրի բնականոն կյանքը, ընդգծել է Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետեւ ելույթներով հանդես են եկել ՀԱՊԿ պետությունների ղեկավարները՝ իրենց դիտարկումներն ու տեսակետները ներկայացնելով Ղազախստանում ստեղծված իրավիճակի եւ դրա կայունացման վերաբերյալ:

### ԱՆՊՐԱՆԻԿ ՀՈՎՃԱՆԵՒՅՑԱԸ՝ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ ՓՈՆԵՆՍԱԳՈՋ

Միավորված ազգերի կազմակերպությունում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Անդրանիկ Հովհաննիսյանն ընդգրկվել է 2022 թվականին ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի փոխնախագահի պաշտոնում: Այս մասին հայտնում է «Թվիթեր»-ում Մարդու իրավունքների խորհրդի պաշտոնական էջը:

Նշենք, որ 2022 թվականին խորհուրդը նախագահելու է Արգենտինան: ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի մյուս երեք փոխնախագահների պաշտոնները զբաղեցնում են Գերմանիայի, Ուզբեկստանի եւ Լիբիայի ներկայացուցիչները:



### ԵՎՄԱՍՏՅՈՒՆ ՀԱՐԿԵ ԵՎՁԱՅԵԼ Է՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԸ ԲԱՐՁՐԱՅՑԵԼ

Հայաստանում եկամտային հարկը 2022 թվականի հունվարի 1-ից նվազել է 2021-ի 22 փոկոսի համեմատ դառնալով 21 փոկոս, իսկ սոցիալական վճարը բարձրացրել է 1 փոկոսով՝ դառնալով 4.5 փոկոս: Եկամտային հարկը մինչև 2023 թվականը ամեն փարի նվազելու է 1 փոկոսով հասնելով 20 փոկոսի: 2022-ի հունվարի 1-ից սոցիալական վճարը 3.5-ի փոխարեն, դարձել է 4.5 փոկոս, համապատասխանաբար պետությունը վճարելու է 5.5 փոկոսը: Իսկ 500 հազար դրամից ավելի աշխատավարձ ստացողների սոցիալական վճարը հաշվարկվում է 10 փոկոսի եւ 27 500 դրամի փարքերության չափով: Հայաստանում սոցիալական վճարներ են կատարում 1974 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնվածները: Իսկ մինչև 1974 թվականը ծնվածները համակարգին կարող են միանալ՝ «Կուրակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնելով:

### ՎՅԱՆՔԻՑ ՇԵՐԱՅԵԼ Է ԲԱՆԱՍՏԵՂՈՒ ՈՒՍՏԻՎ ՊԱՐՈՅՑԱԸ

Երեսնում, կյանքի 82-րդ փարում մահացել է բանաստեղծ, հասարակական գործիչ Ռազմիկ Դավոյանը: Անվանի բանաստեղծը ավելի քան 40 ժողովածուի է գրքերի հեղինակ է այդ թվում ռուսերեն, չեխերեն եւ անգլերեն լեզուներով: Նրա ստեղծագործությունները տպագրվել են իտալական, ֆրանսիական, հարավսլավական, իրանական, չինական եւ ամերիկյան պարբերականներում: «Թորոս Ռուլին» պոեմը առաջին անգամ հրատարակվել է Նյու Յորքում, իսկ 1990թ. չեխական հեղինակավոր «Օդեոն» հրատարակչությունը նրա ստեղծագործությունները ներառել է համաշխարհային գրականության անթոլոգիայում: Ռազմիկ Դավոյանի կյանքին ու գործին անդրադարձել են ֆրանսիական «Ֆիգարո», բրիտանական «Թայմզ» պարբերականները: Բանաստեղծը աշխատել է նաեւ պետական կառույցներում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, եղել Հայաստանի պետական մրցանակների կոմիտեի պատասխանատու քարտուղարը, Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդակցանք:



## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՄՆ ՆՇՈՒՄ ԵՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 30-ԱՄՅԱԿԸ



Հայաստանի Հանրապետությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները նշել են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-րդ տարեդարձը: Հայ-ամերիկյան երկկողմ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են ուղիղ 30 տարի առաջ՝ 1992 թ. հունվարի 7-ին:

«1992 թվականից ի վեր Հայաստանը եւ Միացյալ Նահանգները զարգացրել են ամուր գործընկերություն՝ խարսխված ժողովրդավարության ընդհանուր արժեքների, մարդու իրավունքների հարգման եւ օրենքի գերակայության

վրա»,- նշված է ՀՀ արտգործնախարարության հայտարարության մեջ:

Երեսնում Միացյալ Նահանգների դեսպանությունը հիշեցրել է, որ հայ-ամերիկյան հարաբերությունների պատմությունը սկիզբ է առել նախորդ դարի 20-ականներին,

1918-20թթ. կարճ ժամանակահատվածում ԱՄՆ պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբին դիվանագիտական նուստ էր փոխանցել Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Բաստրմաջյանին տեղեկացնելով Հայաստանի անկախությունը ճանաչելու նախագահ Վուդրո Վիլսոնի որոշման մասին:

Հաջորդը, 1991թ. դեկտեմբերի 25-ին էր, երբ Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշ Ավագը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

## ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻ ԸՆՐՔ ՎԱՅՐԵՐ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ԱՅՅԵԼԵԼ ՄԻԱՅՆ ՊԱՏՎԱՍՏԱԾ ԿԱՄ 24. 72 ԺԱՄ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՐ ԲԱՃԱՍԱԿԱՆ ԹԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻՔ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի համապատասխան հրամանը պաշտոնապես հրապարակվել է հունվարի 7-ին, ուժի մեջ է մտնելու հրապարակումից 15 օր անց, այսինքն՝ հունվարի 22-ից:

Ըստ նախարարի, որոշումն առնչվում է սննդի օբյեկտներին, հյուրանոցային տնտեսության օբյեկտներին եւ մարզասրահներին, գրադարաններին եւ թանգարաններին, թատերահամերգային, կինոյի եւ այլ մշակութային գործունեություններին իրականացնող կազմակերպություններին: Պահանջը չի վերաբերում մինչև 18 տարեկան անձանց՝ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, ինչպես նաեւ հղիներին՝ հղիության մասին բժշկական փաստաթուղթ ներկայացնելու

դեպքում, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցողներին՝ բացարձակ հակացուցման մասին բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, ինչպես նաեւ նախկինում COVID-19-ով արդեն հիվանդացածներին՝ ՊՇՈ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՈ հետազոտության առաջին դրական արդյունքը հավաստող էլեկտրոնային առողջապահության միասնական տե-

ղեկատվական ԱՐՄԵԴ համակարգից արտածված հավաստագիր ներկայացնելու դեպքում:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ավելի վաղ ճեպագրույցում հայտնել էր, որ տնտեսավարողները որեւէ հավելյալ ծախսեր իրականացնելու, սարք-սարքավորումներ գնելու կարիք չունեն նկատելով, որ բոլորի հեռախոսներում, այսինքն՝ սմարթֆոններում հասանելի են թե՛ թեստավորման, թե՛ պատվաստման սերտիֆիկատները:

## ԵՐՐՈՐԳ ԵՎ ԶՈՐՐՈՐԳ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆԵՂՅԱՆ ԳԵՊԵՈՒՄ՝ ԱՄՍԱԿԱՆ 50 000 ԴՐԱՄ

2022թ. հունվարի 1-ից հետո ծնված կարգաթվով երրորդ եւ հաջորդ երեխաների դեպքում կտրամադրվի ամսական 50 000 դրամ աջակցություն՝ մինչև երեխայի 6 տարեկան դառնալը:

ված են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեզիստորում: Ընդ որում, զույգ կամ միաժամանակ ավելի թվով երեխաներ ծնվելու դեպքում հաշվի է առնվելու բարձր կարգաթվով երեխայի ծննդյան փաստը եւ կնշանակվի դրամական աջակցությունը նոր ծնված բոլոր երեխաների հա-

մար: Այսինքն, եթե ընտանիքում կա 1 երեխա եւ ծնվում է զույգ, ապա ընտանիքում 3 երեխայի առկայության պայմաններում դրամական աջակցություն կնշանակվի արդեն նոր ծնված յուրաքանչյուր երեխայի համար, տվյալ օրինակի համաձայն ընտանիքը 6 տարի շարունակ կստանա ամսական 100 000 դրամ:

Դրամական աջակցությունը կնշանակվի, եթե աջակցության համար դիմող երեխայի ծնողը ՀՀ քաղաքացի է, դիմելու օրվա դրությամբ ծնողը եւ նոր ծնված երեխան գտնվում

են Հայաստանի Հանրապետությունում, դիմելու օրվա դրությամբ ծնողը, նոր ծնված երեխան եւ երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները հաշվառ-



ԽՈՅ  
21.03-20.04



Տարվա խնդիրը ձեր ներքին հնարավորությունների ամրապնդումն է: Դա ե՛լ նյութական բազա է, ե՛լ ֆինանսներ, ե՛լ մարմնի ու առողջության խնամք: Նպատակը մեկն է՝ վատնումից դեպի կուտակում, ծախսերից դեպի եկամուտ: Տարվա ավարտին ձեր քսակում կունենաք ռեսուրսներ, ինչով վստահ կնայեք ապագային: Հիշե՛ք՝ երկնային ուժերը ձեզ կաջակցեն այն պայմանով, եթե ուղղորդվեք ճիշտ ճանապարհով: Դրա համար խուսափեք հեռավոր ազգակցների, հարեւանների, գործընկերների հետ վեճից, հակառակ դեպքում տարին կանցնի ստի, խարդավանքի, կեղծիքի, նախանձի մթնոլորտում: Անձնական կյանքում ամեն ինչ խաղաղ է, ձեր կողակցի կարծիքը ձեզ համար շատ կարեւոր կդառնա: Միայնակները 2022-ին իրենց կյանքի ընկերոջը գտնելու շանս կունենան, իսկ հատուկ ամուսինները՝ կզգան վաղեմի կրքերի պակաս: Նրանց փոխհարաբերությունները կարող են կառուցվել փոխվստահության եւ միասին լինելու ձգտումներով: Հիշե՛ք՝ ֆինանսների ամրապնդման համար պետք է կարողանաք գտնել եկամտի հուսալի աղբյուր:

ՑՈՒԼ  
21.04-20.05



2022-ին կաճի ձեր ինքնավստահությունը: Կփոխվի նաեւ ձեր արտաքին տեսքը: Ձեր կողքին կհայտնվեն նոր ընկերներ, ովքեր կաջակցեն ձեզ կարեւոր ձգտումներում: Բայց ձեզանից պահանջվում է լիովին հենվել սեփական եւ-ին: Եթե ամուսին եք, ապա պետք է չափից ավելի ակտիվություն՝ ապագա կողակցին գտնելու ուղղությամբ: Հիմա ձեր խնդիրն է՝ բոլոր դժվարությունները հաղթահարել ինքնուրույն: Ֆինանսների հարցում խուսափեք ցանկացած կասկածելի գործարքներից, ճանաչեք փողը բանում չտալ:

ԵՐԿՈՐՅԱԿՆԵՐ  
21.05-21.06



Ձեր կյանքում սպասվում են կարեւոր իրադարձություններ: Մինչեւ ապրիլի կեսերը կլինի բարդ շրջան. այդ ժամանակամիջոցը դեռ կպահպանի անցյալ տարվանից սկսված անբարենպաստ մթնոլորտը: Հիմա ամուսնության նպատակով ինչ-որ մեկի հետ ծանոթանալու եւ մենակությունից ազատվելու ջանքերը զուր կանցնեն: Աստղերը երաշխավորում են, որ ձեզ հոգով մոտ անձնավորությանը կհանդիպեք այն պայմանով, եթե կարողանաք հասնել ներքին հոգեկան խաղաղության: Հիմա ունեք հենց ընկերական շփման պահանջ: Կողակցի ձեր հարաբերությունները կլինեն խաղաղ: Կարիերայի ոլորտում կծագեն հակասական փաստեր եւ այն կարող է ընդմիջտ ավարտվել: Ոչ մի դեպքում չսկսեք խոշոր նախագծեր՝ ֆինանսների ավելացման ուղղությամբ: Որքան էլ դրանք ձեզ գրավիչ թվան, միեւնույն է, դատապարտված են անհաջողության: Ձեզանից պահանջվում է բացարձակ համեստություն եւ կրավորականություն: Պետք է լինեք հոգեպես պատրաստ՝ հանգամանքների ցանկացած շրջադարձերի եւ՝ համոզված, որ չեք մնա առանց աջակցության:

# ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԵՑԳԵՏԻՆ  
22.06-22.07



Հիմա ձեզ համար ճիշտը կյանքի հոսանքին տրվելն է, քանի որ ձեզանից քիչ բան է կախված: Բայց դա ձեզ չպետք է դարձնի անօգնական զոհ. դուք կհաղթեք, եթե կարողանաք մնալ խաղաղ, պահպանել հավատը կյանքի նկատմամբ: Վերջնականապես ազատվեք ինչ-որ բան կորցնելու վախից եւ ինչ-որ բան ստանալու հույսից: Ճակատագրից պարզեւներ կստանաք, եթե չմեղադրեք նրան: Դժվար պահերին ապավինեք ընկեր-բարեկամներին եւ նրանցից կստանաք անհրաժեշտ աջակցություն: Հնարավոր անձնական ճգնաժամի դեպքում, ձեր երկրորդ կեսը կդառնա ձեր աջակիցը եւ կօգնի ձեզ: Կարիերայում գործերը կընթանան լավ: Ապավինեք գործընկերների աջակցությանը, հենց նրանցից ստացած էներգիան թույլ կտա իրականացնել ամենալուրջ ծրարները: Ֆինանսական վիճակը կլինի նորմալ, առանց ծանր ճգնաժամների:

ԱՌՅՈՒԾ  
22.07-22.08



Տարվա հիմնական խնդիրը կապված է ծավալում նպատակների իրականացման հետ: Հիմա դուք պարզաբանում եք այն հարցը, թե ինչով եք զբաղվելու մոտակա 18 տարիներից: Այդ պատճառով էլ ձեր ընտրությունը լինելու է երկարաժամկետ: Այս տարի դուք ձեզանում կծեւավորեք այն կերպարը, ինչով կներկայանաք հասարակությանը, եւ դա կապված կլինի պրոֆեսիոնալ գործունեության հետ: Խուսափեք պակաս ծանոթ մարդկանց համագործակցությունից, եւ անելիքը արեք ինքնուրույն առանց ընտանիքի անդամների աջակցության: Եթե չեք հանդիպել ձեր գույգին, ապա տարին ձեզ այդ հնարավորությունը կընձեռի եւ ձեր կապը կլինի լուրջ ու երկարատեւ: Երիտասարդ Առյուծի համար իր մասնագիտական ընտրությունը անսպասելի կլինի շրջապատի համար: Ավելի փորձվածները կբացահայտեն՝ իրենց համար մինչ այդ անծանոթ եւ շատ հրապուրիչ պրոֆեսիոնալ դաշտ, համուն որի պատրաստ կլինեն հրաժարվել նվաճած բարձունքներից: Ձեզ սպասվում է հետաքրքիր ճանապարհորդություն, որը կբերի՝ կյանքի ու գոյության բարձր գաղափարների գիտակցմանը:

ԿՈՒՅԱ  
23.08-22.09



Կույսի համար առաջնահերթ խնդիրը ոչ թե նյութական, այլ հոգեւոր դաշտում բարձր նպատակների հասնելն է: Դուք չպետք է սահմանափակվեք առօրյա մեղ շփումներով եւ գործերով: Այս տարի ձեզ համար բարդ կլինեն շփումները ընկերների ու համախոհների հետ: Կույսը կհայտնաբերի, որ չունի այնպիսի գրուցակից, որի հետ շփվի հոգեպես: Աստղերի խորհուրդն է՝ խուսափել շտապ եզրակացություններից. գուցե մարդիկ այնքան էլ կույր ու խուլ չեն, ինչպես դա ձեզ թվում է: Տարին կբերի հակառակ սեռի հետ խոստումնալից եւ ամուր հարաբերություններ: Նրանք, ում

համարում էիք մոտ, իրականում կարող են շատ հեռու լինել ձեզանից, եւ դա պետք է ընդունել խաղաղ: Այս տարվա ձեր դեմքն է՝ «Համբերություն եւ աշխատասիրություն»: Ֆինանսական գործերում ճգնաժամեր չեն սպասվում:

ԿՇԵՈՔ  
23.09-22.10



2022թ.-ը փորձության մի շրջան է, որը կստիպի ապրել փոփոխականության պայմաններում: Եվ ձեր խնդիրը այդ հիմնահարցը լավագույն կերպով լուծելն է: Այս տարի ձեր եկամուտները կարող են պակասել, կարող եք բախվել ճգնաժամային իրավիճակների, բայց պետք է դիմադրել հարվածին: Կարիերան կընթանա ձեր ձգտումներից անկախ եւ կենթարկվի հանգամանքներին: Եթե հայտնվեք ման վիճակում, փորձեք մոռանալ պրոֆեսիոնալ ամբիջիաների ու ձգտումների մասին եւ՝ լծվել մեկ ուրիշ գործի: Կարճ ժամանակում երկար սպասված հաջողության քամին կհասնի ձեզ, բայց ոչ այն կողմից, որտեղից սպասում էիք: Սկստի ունեցեք, որ ֆինանսական խնդիրներում կհաղթեք միայն փորձված ներդրողները, բիրժային շուկայի խաղացողները, նրանք, ովքեր կարող են ռիսկի դիմել՝ առանց որեւէ երաշխիքի: Եթե տեսեք, որ ձեր եկամուտները պակասել են, հաշտվեք իրավիճակին եւ խաղաղ ընդունեք այն:

ԿՍՐԻՃ  
23.10-21.11



Ձեր զարգացման ուղին 2022-ին պահանջում է՝ անհատական գործունեությունից դեպի կոլեկտիվ համագործակցություն, «պատերազմից» դեպի խաղաղ պայմանավորվածություն: Եկել է ժամանակը գիտակցելու, որ, միայնակ ինչ-որ բանի հասնելը, դժվար կլինի: Հենց տարվա սկզբից հրաժարվեք վտանգավոր մարգածեներից եւ այլ վտանգավոր նախաձեռնություններից: Առանց ծայրահեղ անհրաժեշտության, լավ կլինի, չճանապարհորդել: Միայնակ Կարիճների մ սպասվում է անսպասելի ծանոթություն, հավանաբար դա լինի նոյեմբերին: Կարիերայում եւ պրոֆեսիոնալ գործերում եկել է չեզոք մի շրջան: Դուք ազատ եք. կարող եք մնալ ձեր գործին կամ փոխել այն: Խուսափեք խոշոր եւ հապճեպ ծախսերից, նաեւ՝ մրսելուց, ալկոհոլի չարաշահումից, մեքենայով ճանապարհորդելուց: Ցանկալի է ընդհանրապես հրաժարվել ալկոհոլից:

ԱՂԵՂՆԱՎՈՐ  
22.11-21.12



2022-ին ձեզ անհրաժեշտ է հետեւել ինքնագոցողությանը, հոգ տանել մերձավորների, ընտանիքի անդամների մասին: Ձեզ բանկ մարդիկ, ձեր օգնության կարիքը կունենան: Ամրացեք հոգեպես եւ հավատացեք, որ կկարողանաք հաղթանակով դուրս գալ ցանկացած ճակատամարտից: Տարին ամենալավ ժամանակն է՝ զբաղվելու ինքնակրթությամբ: Չուզեցե՛ք հետ հարաբերություններում խուսափեք վեճերից, շրջանցեք սուր անկյունները: Կարիերային թռիչք գալիք տարում քիչ է հավանական. մոտ անցյալում դուք բավա-

կանին բարձր հորիզոնականի հասաք այդ ուղղությամբ, եւ հիմա գլխավորը ձեր դիրքը պահպանելն է: Բացառված չէ կտրուկ շրջադարձ եւ մասնագիտության ու աշխատանքի փոփոխում: Վստահեք ինքներդ ձեզ եւ աստիճանաբար ամեն ինչից գլուխ կհանեք:

ԱՅԾԵՂՋՅՈՒՐ  
22.12-19.01



Հիմա ձեր գլխավոր խնդիրը ինքնահաստատումն է, ստեղծագործական ներուժի օգտագործումը: Այժմ մաքուր խղճով կարող եք զբաղվել նրանով, ինչի մասին վաղուց երազում էիք: Մի՛ անաչեք ցույց տալ շրջապատին ձեր ջանքերի պտուղները եւ ստանալ ճանաչում ու շրջապատի օրինավոր հիացումը: Այս տարի ունեք շանս՝ ստեղծելու արժեքավոր եւ առանձնահատուկը: Միայնակ Այծեղջյուրը կունենա իր մեծ սերը գտնելու շանս: Դա կլինի անսպասելի, եւ այդ իրադարձությունը կնշանավորի Այծեղջյուրի ողջ հետագա կյանքը: Վաղուց ամուսնացած զույգերի մեջ, հավանաբար, ծագեն խնդիրներ: Ցանկացած իրավիճակ ընդունեք որպես անհրաժեշտություն եւ չփորձեք որեւէ բան փոխել, որովհետեւ դրանից վիճակն ավելի կվատաբարանա: Մի՛ սպասեք կարիերայի թռիչքի կամ վայրէջքի: Ֆինանսական դաշտում սպասվում են հաջողություններ, ինչը ձեզ հնարավորություն կտա ամրապնդելու նյութական վիճակը:

ՋՐՈՍ  
20.01-19.02



Տիեզերքը որոշել է ձեզ ընտրության ենթարկել՝ ստուգել, թե որչափ եք ընդունակ պատասխանատու լինել ձեր որոշումներում: Գլխավոր խնդիրը հիմա ինքնուրույնության հասնելն է: Անձնական կյանքում որեւէ վառ իրադարձության հավանականությունը քիչ է: Եվ դա լավ է: Ամեն ինչ կատարվում է ըստ կարգի: Այդուհանդերձ, նորածանոթ զույգերի միջեւ հնարավոր են անսխառություններ. խուսափեք շտապ եզրակացություններ անելուց եւ կապերը խզելուց: Գարնանն ամեն ինչ կհարթվի: Աշխատավայրում կարող են խնդիրներ ծագել: Եթե ձեզ չի հաջողվի շտկել այդ իրավիճակը եւ կորցնեք ձեր աշխատանքը, մի՛ հուսահատվեք: Կարճ ժամանակում կստանաք նոր առաջարկություններ, իսկ գարնանը լավ վաստակի հնարավորություն կունենաք:

ՉԿՆԵՐ  
20.02-20.03



2022-ին դուք գիտակցում եք ձեր ունակությունները եւ շարժվում եք դեպի նպատակ: Խուսափեք շաբլոնից, պահպանողական հայացքներից եւ պայմանականություններից: Միայն այդ դեպքում Տիեզերքը ձեզ կընձեռի աներեւակայելի հնարավորություններ: Ընթացիկ տարում Ձկների համար քիչ է հավանական անսպասելի երջանիկ ամուսնություն կամ ընտանիքի փլուզում: Մեր խորհուրդն է՝ մի՛ փորձեք վիճել ճակատագրի հետ: Իրավիճակների բնական ընթացքը փոխելու ջանքերը դատապարտված կլինեն պարտության: Կարեւորն այս դեպքում հավատն է առ այն, որ ամենալավը առջեւում է: Կարիերայում խուսափեք մեծ ձեռնարկումներից: Ֆինանսների ուղղությամբ Ձկների մոտ ամեն ինչ կարգավորված է:

Պատրաստեց  
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՊՆԱՅԱՆԸ



# 2022-Ը «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՏ

	ՀՈՒՆՎԱՐ					ՓԵՏՐՎԱՐ				ՍԱՐՏ				ԱՊՐԻԼ				ՄԱՅԻՍ					ՀՈՒՆԻՍ			
Երկ.	3	10	17	24	31	7	14	21	28	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27
Երք.	4	11	18	25	1	8	15	22	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28
Չրք.	5	12	19	26	2	9	16	23	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29
Հինգ.	6	13	20	27	3	10	17	24	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30
Ուրբ.	7	14	21	28	4	11	18	25	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24	
Շաբ.	1	8	15	22	29	5	12	19	26	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25
Կիր.	2	9	16	23	30	6	13	20	27	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26

  

	ՀՈՒՆԻՍ					ՕԳՈՍՏՈՍ				ՍԵՊՏԵՄԲԵՐ				ՀՈԿՏԵՄԲԵՐ					ՆՈՅԵՄԲԵՐ				ԴԵԿՏԵՄԲԵՐ				
Երկ.	4	11	18	25	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	
Երք.	5	12	19	26	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	
Չրք.	6	13	20	27	3	10	17	24	31	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	
Հինգ.	7	14	21	28	4	11	18	25	1	8	15	22	29	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	
Ուրբ.	1	8	15	22	29	5	12	19	26	2	9	16	23	30	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30
Շաբ.	2	9	16	23	30	6	13	20	27	3	10	17	24	1	8	15	22	29	5	12	19	26	3	10	17	24	31
Կիր.	3	10	17	24	31	7	14	21	28	4	11	18	25	2	9	16	23	30	6	13	20	27	4	11	18	25	

**ՀՈՒՆՎԱՐ.** 1, 2 - Նոր տարի, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ջրօրհներ: **ՍԱՐՏ.** 3 - Մայրության օր, 8 - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ.** 9 - Վրաստանի ազգային միասնության օր, 22 - Կարմիր ուրբաթ: 24 - Սուրբ Ջատիկ, 25 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՅԻՍ.** 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - Վրաստանի պետական անկախության վերականգնման օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 28 - Մարիամորա: **ՀՈԿՏԵՄԲԵՐ.** 14 - Սցխեթորա: **ՆՈՅԵՄԲԵՐ.** 23 - Գիորգորա:

Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են: **ՀՈՒՆՎԱՐ.** 5 - ճրագալույցի տոն, 6 - Սուրբ Ծնունդ եւ Աստվածհայտնության տոն (Մկրտություն), 7 - Հանգուցյալների հիշատակի օր: **ԱՊՐԻԼ.** 15 - Կարմիր ուրբաթ, 17 - Սուրբ Ջատիկ, 18 - Հանգուցյալների հիշատակի օր, 24 - Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: **ՀՈՒՆԻՍ.** 24 - Պայծառակերպություն, 15 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 14 - Վերափոխում, 15 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍԵՊՏԵՄԲԵՐ.** 11 - Խաչվերաց:

<p>Գլխավոր խմբագիր՝ <b>ՎԱՆ ԲԱՅԲՈՒԹՅԱՆ</b>                  Գլխ. խմբագրի տեղակալ՝ <b>ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ</b>                  Համարի պատասխանատու՝ <b>ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ</b>                  Համակարգչային ձեւավորումը՝ <b>ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ</b></p>	<p>ԲՅՅԵՆ ՅՈՆԱՅՅԵՏՈՒ: ԹՅՈՒՆՈՍԻ 0105, ԶԱՏՐԵՅՈՒՆ ԺՅԻՃ 5,                  Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5                  ԹՖՁ. Հեռ. 2990-739, 2990-774                  www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com                  Գրանցման վկայական № 4 4 - 1439                  «ԿՈՆՈՐ» հրատարակչություն</p>	<p>«ՅՐԱՆՏԱՆ»                  ԹՅՈՒՆՈՍԻ, ՆԱՅՅԵՏՅՈՒՆ                  «ՎՐԱՍՏԱՆ»                  Тбилиси, Грузия                  &lt;VRASTAN&gt;                  Georgia, Tbilisi                  Индекс 66445</p>
--	--	---